«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հավելված
«Վանաձորի Հ.Թումանյանի անվան
պետական համալսարան» հիմնադրամի
ռեկտորի 06.10.2026թ. թիվ 666Ն/Մ հրաման

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄՈՒՄ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ, ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ, ՕԼԻՄՊԻԱԴԱՆԵՐԻ ԵՎ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳ

Ընդունված է ՎՊՀ-ի գիտական խորհրդի կողմից
Արձանագրություն թիվ 1, 31.08.2026թ.

Վանաձոր
2026թ.

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամում (այսուհետ՝ Համալսարան) կրթական բարեփոխումների, շարունակական կրթության և կարիերայի կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) կողմից կազմակերպվող միջոցառումների, մրցույթների, օլիմպիադաների և այլ նախագծերի անցկացման կարգը (այսուհետ՝ Կարգ) սահմանում է միջոցառումների, մրցույթների, օլիմպիադաների, նախագծերի (այսուհետ՝ Միջոցառում կամ Մրցույթ) անցկացման նպատակները և խնդիրները, կազմակերպչական-մեթոդական ապահովումը, անցկացման և ֆինանսավորման կարգը, դպրոցականների, սովորողների, ուսանողների մասնակցությունը և հաղթողներին ու մրցանակակիրներին որոշելու, խրախուսելու կարգը:

II. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2. Միջոցառումների և Մրցույթների կազմակերպման հիմնական նպատակներն ու խնդիրներն են.

-նպաստել դպրոցականների մասնագիտական կողմնորոշմանը, ունակությունների կարիերայի զարգացմանը,

- խթանել դպրոցականների, սովորողների և ուսանողների համատեղ աշխատանքը,

- նպաստել տաղանդավոր, շնորհալի և ստեղծագործական կարողություններով օժտված աշակերտների հայտնաբերմանը և նրանց մասնագիտության կողմնորոշմանը,

-խթանել դպրոցականների ստեղծագործական աշխատանքի, վերլուծական ու քննադատական մտածողության ձևավորումը,

- զարգացնել դպրոցականներ հետաքրքրությունը հանրակրթական առարկաների նկատմամբ, նպաստել հիմնավոր գիտելիքների ձեռքբերմանը,

- խթանել հետաքրքրությունները ստեղծագործական գործունեության նկատմամբ,

- արվեստի, նկարչության և լուսանկարչության միջոցով նպաստել դպրոցականների, սովորողների, ուսանողների գեղագիտական, մշակութային դաստիարակությանը,

- գրականության, գրքի միջոցով նպաստել դպրոցականների սովորողների, ուսանողների, մշակութային, հայրենասիրական դաստիարակությանը,

- հնարավորություն ընձեռել դպրոցականներին, սովորողներին, ուսանողներին դրսևորելու իրենց կարողությունները նախագծային աշխատանքների միջոցով,

- հնարավորություն ընձեռել դպրոցականներին, սովորողներին, ուսանողներին իրականացնելու իրենց ստեղծագործական կարողությունները,
- աջակցել դպրոցականներին, սովորողներին, ուսանողներին՝ ստեղծարար գաղափարները վերածելու բիզնեսի,
- բացահայտել և խթանել հետաքրքրությունը հետազոտական գործունեության նկատմամբ:

III. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

3. Համալսարանում կազմակերպվող Միջոցառումներին և Մրցույթներին կարող են մասնակցել հանրակրթական դպրոցների, վարժարանի 8-12-րդ դասարանների աշակերտները, քոլեջների սովորողները, ուսանողները:

4. Համալսարանի մրցույթներն անցկացվում են հանձնաժողովների կողմից հանրակրթական ծրագրերի հիման վրա մշակված առաջադրանքներով:

5. Առաջադրանքների կատարման ժամանակը սահմանում է հանձնաժողովը:

6. Մրցույթների գնահատումը կատարվում է 20-միավորանոց համակարգով՝ ըստ անհրաժեշտության պահպանելով տասնորդական միավորների գնահատելու կարգը:

7. Մրցույթները կարող են անցկացվել մեկ կամ երկու փուլով:

8. Յուրաքանչյուր Մրցույթի համար սահմանվում է գնահատման առանձնահատկություններ (տես՝ Հավելվածներ 1-4):

9. Առանձին դեպքերում գնահատման չափանիշները սահմանվում են հանձնաժողով(ներ)ի կողմից:

10. Մրցույթի արդյունքները ամփոփվում են մրցույթն ավարտվելուց հետո՝ երեք օրվա ընթացքում:

11. Մրցույթի արդյունքները հայտարարվում են մեկ շաբաթվա ընթացքում և տեղադրվում են Համալսարանի կայքում և սոցցանցերում:

IV. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

12. Միջոցառումների և մրցույթների անցկացումը ֆինանսավորվում է Համալսարանի բյուջեից: Տրամադրվող միջոցները նախատեսված են անհրաժեշտ նյութերի ձեռքբերման և հաղթողների պարգևատրման համար:

V. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

13. Միջոցառման կամ Մրցույթի կազմակերպման, մեթոդական ապահովման, հաղթողներին և մրցանակակիրներին որոշելու նպատակով անցկացման ժամկետից առաջ Կենտրոնի ղեկավարի առաջադրմամբ Համալսարանի ռեկտորի հրամանով ստեղծվում է կազմակերպչական, մրցութային, առարկայական կամ այլ հանձնաժողով(ներ):

14. Միջոցառման կամ Մրցույթի կազմակերպման համար Համալսարանը նախապես տեղեկատվական նամակ է ուղարկում հանրակրթական դպրոցների, վարժարանի, քոլեջների տնօրեններին, տեղեկացնում է կազմակերպվող Միջոցառման կամ Մրցույթի մասին՝ նշելով անցկացման ստույգ ժամկետը, վայրը և անհրաժեշտ պայմանները:

15. Միջոցառման կամ Մրցույթի կազմակերպման համար Կենտրոնի ղեկավարի ստորագրությամբ ամբիոն(ներ)ին ուղարկվում է տեղեկատվական գրություն՝ Միջոցառման կամ Մրցույթի անցկացման մասին: Տեղեկատվությունը տեղադրվում է նաև Համալսարանի կայքում և սոցցանցերում:

16. Մասնակցության հայտերը ընդունվում են մինչև տեղեկատվական նամակում նշված հայտագրման նախավերջին օրը (տե՛ս Հավելված 5.):

17. Ստացված հայտերի հիման վրա կազմվում են մասնակիցների ցուցակները:

18. Միջոցառման կամ Մրցույթի մասնակիցները գրանցվելու համար ներկայանում են Համալսարան մեկնարկից կես ժամ առաջ:

VI. ՀԱՂԹՈՂՆԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՐԳԸ

19. Միջոցառման և Մրցույթի հաղթողներ են ճանաչվում այն մասնակիցները, ովքեր հավաքել են ամենաբարձր միավորները:

20. Միջոցառման և Մրցույթի հաղթողներին հանձնվում են առաջին, երկրորդ, երրորդ կարգի դիպլոմներ և խրախուսական շնորհակալագրեր:

21. Հաղթողներին արտոնություններ տրվում են մանդատային հանձնաժողովի որոշմամբ:

22. Միջոցառման և Մրցույթի ընդհանուր ղեկավարումը իրականացվում է Համալսարանի Կենտրոնի կողմից:

23. Հանձնաժողով(ներ)ի գործունեությունը իրականացվում է համաձայն սույն Կարգի:

24. Հանձնաժողով(ներ)ը կազմում է Մրցույթի առաջադրանքների փաթեթը, Միջոցառման ծրագիրը, վերահսկում է կատարման ընթացքը, որոշում է ժամկետները, գնահատում է մասնակիցներին և լուծում ընթացքում առաջացող խնդիրները:

25. Առաջացած խնդիրների լուծման համար արդյունքների հրապարակումից հետո՝ 24 ժամվա ընթացքում, մասնակիցը կարող է դիմել Կենտրոն՝ պարզաբանումներ ստանալու համապատասխան հանձնաժողովի նախագահի կողմից:

VII. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

26. Սույն Կարգը հաստատվում է Համալսարանի գիտական խորհրդի կողմից և ուժի մեջ է մտնում ռեկտորի հրամանով:

27. Սույն Կարգը ուժի մեջ մտնելուց հետո ուժը կարցրած ճանաչել.

1. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի

դպրոցականների ասմունքի մրցույթի կազմակերպման, անցկացման, արդյունքների ամփոփման կարգ:

2.«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի դպրոցականների լուսանկարչական աշխատանքների մրցույթի կազմակերպման, անցկացման, արդյունքների ամփոփման կարգ:

Հավելված 1.

Ասմունքի գնահատման հիմնական չափանիշներն են.

- գրական երկի ընտրությունը՝ 4 միավոր,
- ասմունքողի գեղարվեստական խոսքը՝ 10 միավոր,
- խոսքի տեխնիկան՝ 6 միավոր,

Հավելված 2.

Լուսանկարչական աշխատանքների գնահատման հիմնական չափանիշներն են.

- լուսանկարների սյուժեների յուրօրինակությունը 4 միավոր,
- լուսանկարների համապատասխանումը մրցույթի թեմային 5 միավոր,
- լուսանկարի գեղարվեստական և տեխնիկական որակները 3 միավոր,
- ստեղծագործական մոտեցման առկայությունը 8 միավոր:

Հավելված 3.

Գեղանկարչական աշխատանքների գնահատման չափանիշներն են՝

- Նկարի կոմպոզիցիոն կառուցվածք (թղթի մեջ համաչափ և գեղեցիկ տեղադրում) 5 միավոր,
- Նկարչական նյութի հետ աշխատելու ունակություններ (գուաշի կամ ջրաներկի տեխնիկայի իմտություններ) 10 միավոր,
- Տրված թեմային համապատասխան ստեղծագործական մտածողություն 5 միավոր:

Հավելված 4.

Բիզնես նախագծի մրցույթի գնահատման չափանիշներն են.

ա. բիզնեսի գաղափարը -**3 միավոր**

բ. բիզնեսի նկարագրությունը -**3 միավոր**

գ. տեղեկություններ թիմի մասնակիցների մասին - **3 միավոր**

դ. տեղեկություն արտադրության կամ նորարարության ստեղծման մասին - **3 միավոր**

ե. տեղեկություն անհրաժեշտ ռեսուրսների մասին - **2 միավոր**

զ. նկարագրություն վաճառքի, առաջմղման առանձնահատկությունների մասին

- **3 միավոր**

է. «Բիզնես պլանի» ծրագրի մասին պատրաստած պրեզենտացիա - **3 միավոր**

Հավելված 5.

Մասնակիցների հայտերի լրացման ձևանմուշ

	Ազգանուն, անուն, հայրանուն	դպրոց	դասարան	Առաջնորդի կամ ղեկավարի ստեղծագործական թիմի կամ նախագծի անվանում	Նամակագրության համար հասցե
1					
2					
3					